ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2022 թ.
№ 14 (1093)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Նվիրումի երդում՝ ուսուցչի կոչմանը

Տարիներ շարունակ մեծ մանկավարժի՝ Քանաքեռում գտնվող տուն-թանգարանի բակը լցվում էր առաջին կուրսեցիների լուսավոր հայացքներով ու տոնական աշխույժով:

Մանկավարժական համալսարանի առաջին կուրս ընդունված ուսանողների երդման արարողությունն այս տարի անցկացվեց պատերազմում նահատակված ուսանողների հուշաքարի մոտ, ինչը Հայրենիքին ու հայ գրին նվիրումի սրբազան խորհուրդ ուներ:

ՀՊՄՀ դասախոսական կազմը և ուսանողները ծաղիկներ խոնարհեցին նահատակված ուսանողների հիշատակը հավերժացնող հուշաքարին:

Մանկավարժական համալսարանի հոբելյանական՝ 100-րդ տարվա առաջին կուրսեցիների երդման արարողությանը ներկա էին ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Ժաննա Անդրեասյանը և Կարեն Թռչունյանը:

Առաջին կուրսեցիներին իր օրհնության խոսքը հղեց ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, գերաշնորհ սրբազան հայր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:

Պատմության ոսկեղենիկ տողերից քաղեք այն, ինչը հայ մարդ է պահելու՝ այս երիտասարդների նման,-հորդորեց Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը՝ հույս հայտնելով՝ «երկունքից հետո միշտ կյանքի, ուրախության պահեր են լինում»:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը Ուսուցչի օրվա առթիվ շնորհավորեց հանրապետության բոլոր ուսուցիչներին և բարի մուտք մաղթեց առաջին կուրսեցիներին:

«Ազգի ապագայի մոդելի առաջ- ➢2

Միջազգային գիտաժողով՝ «Եվրոպան և հարևան երկրները»

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ «Եվրոպան և հարևան երկրները» խորագրով երկօրյա միջազգային գիտաժողով: Համալսարանի 100-ամյակին նվիրված գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի, Արցախի, Իսպանիայի, Ռուսաստանի Դաշնության, Հունգարիայի և Պերուի համալսարանների, տարբեր գիտակրթական կենտրոնների մասնագետներ:

Գիտաժողովին մասնակցում էր նաև Հայաստանում Իսպանիայի գործերի հավատարմատար Քրիստինա Սանչոն:

Գիտաժողովի մասնակիցների ողջունեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ ընդգծելով, որ գիտաժողովը հնարավորություն է ընձեռում հանդես գալ նոր ձևաչափով:

Ռեկտորը ներկայացրեց Պատմության ֆակուլտետը, որպես հնագույն ֆակուլտետներից մեկը, որը մշտապես հավատարիմ է իր առաքելությանը մանկավարժական սերունդներ կրթելու գործում:

Սրբուհի Գևորգյանը հպարտությամբ նշեց բուհի մի շարք երևելի գիտնական մանկավարժների անուններ, որոնք կրթադաստիարակչական, գիտամանկավարժական, գիտապատմական մեծ ներդրում են ունեցել ոչ միայն Մանկավարժականի, այլև հանրապետության գիտության զարգացման ոլորտում:

«Աշխարհն այսօր լի է մարտահրավերներով, և այդ տեսանկյունից հայ-իսպանական նոր հարաբերությունների սկզբնավորումը, ինչպես նաև գիտաժողովը հնարավորություն կտան ոչ միայն խնդիրների լուծումներ գտնել, այլև մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից նոր խնդիրներ ձևավորել՝ պահպանելով ուրույն դիմագիծը,-ասաց ռեկտորը,-որովհետև հայկական պետական մանկավարժական համալսարանը այն հենասյունն է, որտեղ մշտապես քննարկվում են լեզվի, պատմության մշակույթի հարցերը՝ որպես ինքնության պահպանման կարևոր բաղադրիչներ»:

Բարձրագույն կրթական հաստատության ղեկավարը նշեց, որ բուհը կարևորում է միջազգային կապերը և ընդգրկված է միջազգային մի շարք ծրագրերի գործընթացներում՝ ամփոփելով՝ սա հոյակապ հնարավորություն է երկխոսության, տարակարծության, կարծիքներ արտահայտելու և լուծումներ առաջարկելու:

Հայաստանում Իսպանիայի գործերի հավատարմատար Քրիստինա Սանչոն խոսեց ոչ միայն եվրոպայի միջազգային իրավունքի, միգրացիայի խնդիրների շուրջ, այլև անդրադարձավ հայ-իսպանական 600-ամյա պատմական կապերին՝ ընդգծելով, որ դեռևս Կիլիկայի վերջին թագավոր Լևոն 6-րդը հայ-իսպանական կապեր է ստեղծել, որոնք հետագայում շա- ➢2

Հոկտեմբերի 15-ին ծնվել է հայ ականավոր գրող, մանկավարժ, լուսավորական, արևելահայ աշխարհաբար գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը:
1948 թ., Խ. Աբովյանի 100-ամյա տարելիցի կապակցությամբ, Մանկավարժական ինստիտուտը կոչվեց նրա անունով:

Աբովյանի մասին

Խաչատուր Աբովյանը այն երկաթե, հաստ և անձև բանալին է, որով բացվում է հայ ոգու դարպասը:

Կոստան ԶԱՐՅԱՆ

Աբովյանի կյանքի ուղին մի զարմանահրաշ առասպելի է նման:

Պիոն ՀԱԿՈԲՅԱՆ

Այսօր նա վերադարձել է ուրիշի դեմքով: Կանգնել է հայ հրապարակում բարձրացված պատվանդանի վրա՝ երևակայական մարմնով, երևակայական դեմքով և աչքերով: Մի քիչ Բեթհովեն, մի քիչ Շիլլեր, մի քիչ Գյոթե: Այսինքն՝ ինչպես երկրորդական տաղանդ ունեցող մի քանդակագործ, որն ուզել է ներկայացնել: Սակայն նրա քարե մարմնի ներսում դեռ եռում է իր վիթխարի թափը: Մեզ համար նա մանավանդ մեծդի ձայն է, ապրել ուզող ժողովրդի հսկայական կանչ:

Կոստան ԶԱՐՅԱՆ

Նվիրումի երդում ուսուցչի կոչմանը

➢1 նահերթությունը կապվում է մանկավարժի գործունեության հետ»,-ասաց ռեկտորը՝ ցավով նշելով նաև հայրենիքի համար զոհված տղաների մասին, որոնք պետք է համալրեին ուսուցիչների շարքերը, սակայն չհասցրին մարմնավորել իրենց երազանքները: Նա առաջին կուրսի ուսանողներին հորդորեց բարձր գիտակցությամբ ու պատասխանատվությամբ նաև նրանց փոխարեն իրականացնել այն առաքելությունը, ինչին կոչված էին, բայց հայրենիքին նվիրեցին ամենաթանկը՝ իրենց կյանքը:

«Մեր հերոսների լռակյաց պատգամը շարունակելու եք դուք՝ Ձեր գիտելիքներով հայ կրթությունը բարձրացնելով մի նոր մակարդակի»,-ասաց ռեկտորը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը խոսեց օրվա խորհրդի մասին՝ ընդգծելով, որ զոհված տղաների օրինակն այսօր ավելի կարևոր դաս է ապագա մանկավարժների համար, իսկ երդումը՝ մեծ ուժ ու պատասխանատվություն: Ժաննա Անդրեասյանը վստահություն հայտնեց, որ ուսուցիչների նոր սերունդը պատվով է կրելու ուսուցչի առաքելությունը և հաջողելու է:

Մեծ խորհուրդ տեսնելով Ուսուցչի օրվա և ապագա ուսուցիչների երդման արարողության փոխկապակցության մեջ՝ նախարարի տեղակալը համոզմունք հայտնեց, որ «ուսուցչի հեղինակության բարձրացմանն ուղղված քայլերը պետք է դիտել ոչ միայն հանրային ընկալման, այլ պետական հետևողական քաղաքականության մեջ, որովհետև ուսուցիչը մեր երկրի անվտանգության ու հզորության երաշխավորն է և դաստիարակում է երկրի համար արժանապատիվ քաղաքացիներ»:

«Ուսուցչի օրը նշելը ապագա ուսուցիչների հետ պատիվ է մեզնից յուրաքանչյուրիս համար: Ուզում եմ, որ այս գիտակցումով ու ոգևորությամբ էլ ձեր ուսումը շարունակեք»,-ասաց Ժաննա Անդրեասյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը վստահեցրեց, որ ապագայի դպրոցը համալրվելու է հրաշալի ուսուցիչներով՝ հանձինս առաջին կուրսեցիների այս սերնդի: Նա ապագա մանկավարժներին մաղթեց ապագայում արժանապատվորեն կրել ուսուցչի կոչումը և հավատարիմ լինել իրենց առաքելությանը:

«Ուսուցիչ՝ անուն բարության, ազնվության, շռայլությանգ դարեր շարունակ գիտության լույսը, սիրո և ակնածանքի առարկա է եղել, ակնածանքի առարկա է եղել նաև ուսուցիչը, ում վստահել են ու հավատացել»,- ասաց Բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը: Նա հորդորեց ապագա մանկավարժներին՝ գիտելիքների ծով կուտակել իրենց մեջ, և այդ գիտելիքները կաթիլ-կաթիլ ներարկել իրենց աշակերտներին:

Առաջին կուրսեցիներին շնորհավորեց և բարի երթ մաղթեց համալսարանի Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

«Ուրախ եմ և հպարտ, որ Մանկավարժական համալսարանի ուսանող եմ, պետք է լավ սովորեմ և ապագայում ինքս սովորեցնեմ, կրթեմ նոր սերնդին, նաև աշակերտներիս կասեմ, որ մանկավարժությունը ամենալավ մասնագիտությունն է, արժե նվիրվել այդ կոչմանն ու առաքելությանը»,-ասաց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Անահիտ Աբրահամյանը:

«Առաջին անգամ եմ մասնակցում նման կարևոր արարողության, կարծում եմ՝ երկար կհիշեմ այս օրը»,-հուզված ասաց Սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնի առաջին կուրսի ուսանողուհի Նինա Հարությունյանը, ով Վայքից է, մասնագիտությունն էլ ընտրել է՝ սիրելով դասվարին, նաև սիրում է երեխաների հետ աշխատել:

Փառք ու պատիվ բոլոր այն երիտասարդներին, ովքեր Հայրենիքի սերը նախընտրեցին: Նրանց օրինակը 100-ամյակի այս սերնդի համար դաս ու պատգամ կլինի, ոգու ուժ ու կորով կհաղորդի՝ ապրելու և արարելու նաև իրենց փոխարեն:

Միջազգային գիտաժողով՝ «Եվրոպան և հարևան երկրները»

➢1 ռունակվել են գիտական, առևտրային և այլ հարաբերությունների ձևաչափով:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը ներկայացրեց Մանկավարժական համալսարանի և Իսպանիայի Կորունիայի համալսարանի համատեղ նախաձեռնությամբ անցկացվող գիտաժողովի նպատակն ու խնդիրները:

Գիտաժողովին մասնակցում էին 6 երկրից՝ տարբեր գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ՝ Իսպանիայից, Հունգարիայից, Ռուսաստանից, Պերուից և ՀՀ-ից:

«Գիտաժողովը միջդիսցիպլինար է՝ միջազգային իրավունք, իրավագիտություն, քաղաքագիտություն, պատմություն: Բուհերի համատեղ կազմակերպած առաջին նման գիտաժողովը հաճելիորեն զուգադիպեց Իսպանիայի դեսպանատան գործերի հավատարմատարի գրասենյակի բացմանը մեր երկրում»,- ասաց դեկան Էդգար Հոհաննիսյանը:

Քրիստինա Սանչոն բարձր է գնահատում մեր երկրների միջև դարավոր կապերը և ընդգծեց, որ այս գիտաժողովը կլինի հարաբերությունների խորացման հաջորդ կարևոր քայլը, այն է՝ կլինեն ինստիտուցիոնալ այլ համագործակցության հնարավորություններ ևս:

Էդգար Հովհաննիսյանն ընդգծեց, որ համատեղ գիտաժողովի նպատակն է նոր միջազգային կապերի ստեղծումը օտարերկրյա մասնագետների հետ, միջդիսցիպլինար համատեքստում տեսնել՝ ինչպես են նրանք նայում պատմական

քաղաքական, հասարակագիտական երևույթներին, լսել հեղինակավոր մասնագետների տեսակետները, նրանց հետ նորովի ու համակողմանի դիտարկել հայտնի իրադարձություններն ու պատմական փաստերը: Ի վերջո, սա նաև գիտական ինտեգրացիայի հնարավորություն է՝ հանդիպել եվրոպական հեղինակավոր և արդեն գործընկեր համալսարանների մասնագետների հետ:

Իսկ ի՞նչ ակնկալիքներ ունենք եվրոպական գործընկերներից Հայաստանի ներկա մարտահրավերներին դիմակայելու առումով: Էդգար Հովհաննիսյանի կարծիքով, հանրային դիվանագիտության տեսանկյունից մարդկանց մտածելակերպում ինչ-որ բան փոխվում է, ճանաչում են մեր խնդիրները, մեր երկիրը: Մասնակիցներից մի քանիսն իրենց զեկուցումներում շոշափում են նաև հարցեր պետական ազգային շահերին տեսանկյունից, մասնավորապես դրանք վերաբերում են Արցախին, տարածաշրջանում էքսիկ կոնֆլիկտներին:

Գիտաժողովի զեկուցումներն ու արդյունքները անգլերեն լեզվով կամփոփվեն իսպանական հեղինակավոր ամսագրում, ինչը ևս լավ հնարավորություն է հանրահռչակելու մեր խնդիրները՝ դրանք ներկայացնելով օտար ընթերցողին ու գիտական հանրությանը:

Իսպանիայի Լա Կորունիայի համալսարանի դասախոս, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Մանկավարժական համալսարանի շրջանավարտ Արտակ Մկրտչյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ այն հարցին, թե ինչպես է աստիճանական զարգացման արդյունքում փոխվում եվրոպական հանրության, եվրամիության որոշումը դեպի հայ-ադրբեջանական հակամարտության արդարացի լուծումը:

«Եվրոպան լինելով այն տարածաշրջանը, որ մշտապես բարդությունների է հանդիպել, ավելի է կարևորում անվտանգության հարցերը: Այսօր փաստ է, որ Թուրքիան Եվրոպայի համար ևս մեծ վտանգ է: Մենք պետք է միջազգային հարաբերություններում մեր ձայնը հասանելի դարձնենք: Այս գիտաժողովը այդ ճանապարհներից մեկն է»,- ասաց Ա. Մկրտչյանը:

Գիտաժողովին մասնակցում էր նաև համալսարանի գործընկեր Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի պատվիրակությունը, որի հայագիտության ամբիոնի ղեկավար Բալինտ Կովիչին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը Գիտական խորհրդի անունից պարգևատրեց «Խաչատուր Աբովյան» մեդալով:

Հեքիաթներ՝ նոր ձևաչափով

ԿԳՄՍ նախարարության կողմից տրված դրամաշնորհային «Կերպարվեստի նախագծեր» ծրագրով Գեղարվեստական կրթության ֆակուլտետում ստեղծել է աշխատանքային խումբ, որը երկար պրպտումների ու որոնումների արդյունքում ստեղծել է հայկական ժողովրդական և ժամանակակից հեղինակային հեքիաթ-բացիկներ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքային խմբերի երեխաների համար, յուրաքանչյուր տարիքի համար՝ 10-ական բացիկ-հեքիաթ:

«Բացիկի տեսքով հեքիաթների

տպագրման նպատակը հեքիաթների հանրահռչակումն է: Դրանք ներկայացվել են համառոտ՝ երեխաների համար առավել գրավիչ և մատչելի, բայց այնպես, որ հեքիաթի գեղարվեստական արժեքը չկորչի»,-ասում է ֆակուլտետի փոխդեկան, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Արմինե Բաղդասարյանը, ով ծրագրի ղեկավարը և համակարգողն է:

Նախագծումներն իրականացրել է № 57 դպրոցի դասվար, հանրապետության լավագույն մեթոդիստ ուսուցիչներից Կարինե Չիբուխչյանը, նախագծի նկարիչներն են Միսաք Մելքոնյանը և Էդուարդ Մուրադյանը: Ձևավորումն արել է ֆակուլտետի շրջանավարտ Վիտալի Ասրիևը:

«Հիմնականում փորձել ենք պահպանել յուրաքանչյուր հեքիաթի գեղարվեստականությունն ու նուրբ շեշտադրումները, նաև հեղինակի բառահումքը»,-ասում է Կարինե Չիբուխչյանը:

Նախագծի անդամները կարծում են՝ հեքիաթների մատուցման նոր ձևաչափով բացիկ-հեքիաթները երեխաներին դուր կգան:

Քննարկում Մանկավարժականում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում անցկացվեց Գիտական խորհրդի ընդլայնված նիստ, որի ընթացքում քննարկվեց երեք բուհերի միավորման և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի կազմում վերակազմավորվելու հարցը:

Նիստին մասնակցում էին ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Կարեն Թռչունյանը և Ժաննա Անդրեասյանը:

Ներկաները լսեցին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանի մեկնաբանությունները լիազոր մարմնի որոշման նախագծի շուրջ:

Նախարարի տեղակալը մասնավորապես նշեց, որ մանկավարժական ուղղվածությունը մեր երկրի համար ռազմավարական նշանակություն ունի, իսկ միավորումը միտված է նրան, որ «կրթությունը մոտեցնենք գիտությանը, նաև ունենանք միջազգային մակարդակի բուհ»:

Բանախոսը փաստերի և ցուցանիշների օրինակներով փորձեց հիմնավորել նախագծում բերված դրույթները՝ անդրադառնալով միջազգային գիտաչափական շտեմարաններում վերոհիշյալ բուհերի ակտիվությանը, ուսանողների ընդունելությանը, մասնագիտությունների և մասնագիտացումների շեղումներին և այլն:

«Ոչ մի նախագիծ չի կարող կատարյալ լինել, և մեր նպատակն է քննարկման արդյունքում գտնել ճիշտ լուծումներ: Մեր նպատակը որակյալ կրթությունն է»,-ասաց Թռչունյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանն ասաց, որ գլոբալ փոփոխությունը բնականաբար մտահոգություններ է տվել, միաժամանակ անթույլատրելի համարեց մանկավարժներ պատրաստող 100-ամյա համալսարանի հասցեին հնչեցրած որակավորումները՝ դրանք համարելով էթիկայի նորմերի խախտում:

ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահն անդրադարձավ մանկավարժական կրթության համատեքստում քննարկված ծրագրերին, ընդունելությանը, նոր մասնագիտություններին, մանկավարժական կրկնակի որակավորումներին, բնագիտության և գյուղական վայրերում ուսուցիչների հավելավճարին, կրթաթոշակների քաղաքականությամբ ուսուցչի մասնագիտության գրավչությունը բարձրացնելու հարցերին:

«Կրթության զարգացման ծրագրում մի շատ կարևոր դրույթ կա. պետության կողմից ֆինանսական փոփոխություն կլինի, ասել է թե պետությունը ձևավորելու և պահպանելու է ենթակառուցվածքը: Մենք պետք է հասկանանք, թե երեք բուհերում որոնք են այն մասնագիտությունները, որ կապ չունեն կրթության հետ: Փոփոխությունների արդյունքում կունենանք կրթության ոլորտում մրցունակ այն բուհը, որտեղ մեր երեխաները կարող են կրթվել»,-վստահեցրեց նախարարի տեղակալը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հարցեր ուղղեցին լիազոր մարմնի անդամներին. դրանք վերաբերում էին ուսուցչի աշխատավարձին, ամբիոնների միավորման սկզբունքներին, միավորված բուհի անվան փոփոխությանը, կրթական ծրագրերը պետք է լինեն միայն մանկավարժակա՞ն ուղղվածությամբ, միացումն արդյո՞ք խանգարելու է մանկավարժի ուսուցման, դասավանդման գործընթացին, ինչպե՞ս են պատկերացնում լեզուների միավորումը միասնական հարթակում և այլն:

«21-րդ դարը նախորդ դարից տարբերվում է նրանով, որ բուհական համակարգում տրանսֆորմացիաներ են տեղի ունենում՝ կրթական ծրագրերի համակցում ու տարանջատում: Մենք պետք է համահունչ քայլենք աշխարհի հետ»,-ասաց Թռչունյանը՝ նաև հավելելով, որ չպետք է լինեն մասնագիտական կրկնումներ, իսկ համակցման տեսանկյունից նոր ստեղծվող բուհը մանկավարժական ուղղվածության է լինելու:

Քննարկման ընթացքում հնչեցին տարբեր կարծիքներ ու դիրքորոշումներ. մանկավարժական գիտությունների թիրախը ուսուցիչն է, և չպետք է առաջնորդվել միջազգային գիտական շտեմարանների ցուցիչներով, կրթության կառավարման կարգերը տարբեր են՝ ինչպե՞ս է լինելու ներդաշնակության հարցը, կրթության ո՞ր մոդելով ենք առաջնորդվելու՝ ամերիկյա՞ն, թե՞ եվրոպական....

ԿԳՄՍ նախարարի տեղակալներին վարձավճարների, անվճար տեղերի մասին և այլ հարցեր ուղղեցին նաև ուսանողները:

Հարցերին հետևեցին դասախոսների ելույթները: Նրանք արտահայտեցին իրենց մտահոգությունները մասնագիտությունների ու մասնագիտացումների միավորման, բուհի նոր անվանման, մանկավարժական կրթության ապագայի և շատ այլ հարցերի շուրջ: Վստահեցրին, որ միակ բուհն է, որ կանգնած է դպրոցի և ուսուցչի կողքին, ազգային դաստիարակություն ու կրթություն է տալիս, նաև քայլում է ժամանակակից գործընթացներին համաքայլ...

Հանդիպումն ամփոփեց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, ով թվերի ու փաստերի տեսքով ներկայացրեց համալսարանի գիտակրթական բարեփոխումները, միջազգային գիտաչափական շտեմարաններում բուհի առաջընթացը, ապա վստահեցրեց՝ լիազոր մարմնի որոշման նախագծի շուրջ կներկայացվի շահագրգիռ հիմնավորումներով փաթեթ:

Մաթեմատիկական հիմնախնդիրների համապեքտում

Մաթեմատիկական կրթության ժամանակակից հիմնախնդիրների քննարկումն արդեն 10-րդ անգամ Մանկավարժական համալսարան էր բերել տարբեր երկրների մասնագետների: Այս անգամ «Մաթեմատիկական կրթություն-10» երկօրյա միջազգային գիտաժողովին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսից, Ուկրաինայից հրավիրված մաթեմատիկոսներ, ոլորտի մասնագետներ:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Համլետ Միքայելյանն ընդգծեց համալասարանի 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի առաձնահատուկ նշանակությունը՝ փաստելով, որ զեկուցումներում կներկայացվի մաթեմատիկական կրթության ողջ ներկապնակը՝ ժամանակակից հիմնախնդիրներով հանդերձ:

«Աշխարհաքաղաքական նոր դասավորումների համատեքստում մեր ինքնության տեղը գտնելու գործը նույնպես դրված է մանկավարժների վրա,-ասաց ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը՝ անդրադառնալով ժամանակակից քաղաքացու արժեբանությունը ձևավորելու խնդրին: Ռեկտորն այդ գործընթացում կարևորեց առողջ տրամաբանությունը՝ շեշտելով, որ մաթեմատիկական կրթությունը կարևոր դեր ունի ոչ միայն այդ տրամաբանության ձևավորման ու զարգացման, այլև նրանում գեղեցիկը բացահայտելու գործում»:

Անդրադառնալով ժամանակի համատեքստում հանրակրթության ասպարեզի արդի մի շարք հիմնախնդիրների՝ Սրբուհի Գևորգյանը մաթեմատիկական կրթությանը նվիրված գիտաժողովը կարևորեց նաև դպրոցի մեթոդաբանական հիմքը զինելու տեսանկյունից:

Պլենար նիստում նախնական մաթեմատիկական կրթության արժեբանության վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ռուսաստանի գիտությունների, Ռուսաստանի կրթության ակադեմիաների ակադեմիկոս Ալեքսեյ Սեմյոնովը: Նա անդրադարձավ նախնական մաթեմատիկական կրթության արժեբանությանը, հանգամանորեն խոսեց այն հիմնախնդիրների մասին, որոնց այսօր բախվում է մաթեմատիկայի ուսուցիչը: Ա. Սիմյոնովը խոսեց արժեքների և ավանդույթների, թվային տեխնոլոգիաների համատեքստում մաթեմատիկական կրթության դերի ու նշանակության մասին՝ վստահեցնելով, որ մաթեմատիկան այլ առարկաներից ավելի շատ է օգնում ուսուցչին՝ սովորողներին դաստիարակելու գործում:

Մաթեմատիկայի ուսուցչին վերապահված «Սովորեցնել սովորել» գործընթացի արդյունքում նա կարևորեց սովորողների ինքնուրույն մտածողությունը, նախաձեռնողականությունը ու օրինականությունը, որոնցով էլ պայմանավորված են հանրակրթության հիմնախնդիրները:

Պրոֆեսոր Համլետ Միքայելյանն իր «Հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը մաթեմատիկական կրթության արժեկողմնորոշիչ ուսուցման և ինֆորմատիզացիայի պայմաններում» զեկուցման մեջ անդրադարձավ արժեկողմնորոշիչ ուսուցմանը. գիտելիքը ևս արժեք է, սակայն չի կարելի սահմանել միասնական արժեքներ՝ նկատի ունենալով ազգային, տեղային առանձնահատկությունները: Դասարան մտնելով՝ ուսուցիչը պետք է հասկանա, որ մաթեմատիկան արժեք է, իսկ աշակերտը պետք է գնահատի այն, ինչ ստանում է: Պրոֆեսորն ընդգծեց՝ «մաթեմատիկան կարողանում է ձևավորել բոլոր արժեքները, իսկ մաթեմատիկական փաստերը աներկբա ճշմարտություններ են»:

Պրոֆեսորն անդրադարձավ ուսուցման ընթացքում սովորողների ներառմանը, փաստեց, որ ուսուցիչների մեծ մասը չի կարողանում օգտագործել աշակերտների ներուժը. «Երբ դասի ընթացքում արժեքներ ես ձևավորում, մեծանում է աշակերտների ներառականությունը»:

Հ. Միքայելյանը մաթեմատիկական կրթության մեջ կարևորեց հոգեբանական անվտանգության հաղթահարման փուլերը՝ ընդգծելով մաթեմատիկայի ուսուցչի առանձնահատուկ դերը և յուրաքանչյուր փուլի առանձնահատկությունը:

Զեկուցողն անդրադարձավ նաև ներկայիս մաթեմատիկայի դասագրքերին, որոնք չեն արտահայտում մաթեմատիկական ժամանակակից կրթության պահանջները, և ուսուցիչներին, որոնք չեն կարևորում այնքան լուրջ խնդիրը՝ ինչպես սովորեցնել մաթեմատիկա:

«Ձեզ համար ո՞րն է գեղեցիկը մաթեմատիկայում, ինչու են ուսուցիչները մտածում, թե աշակերտների մի մասը մաթեմատիկական կարողություններ չունեն, և որ մաթեմատիկան բարդ առարկա է» հարցին Ալեքսեյ Սիմյոնովը պատասխանեց. «Ինձ համար գեղեցիկը մաթեմատիկական գործունեությունն է, նաև այդ գործունեությամբ հիանալը, ինչ-որ դժվարությունների հաղթահարումը, հաջողությունների ձեռքբերումը, այլ մարդկանց օգնելը, ռիսկերն ու հիմնախնդիրները: Ինձ համար գեղեցիկ է նաև սեփական սխալներս հայտնաբերելը, նոր բացահայտումներ անելը, որոնք նախկինում չէի նկատել:

Ցավոք, ուսուցիչների մեծ մասի կարծիքով կան մաթեմատիկական կարողություններից զուրկ աշակերտներ: Իսկ ես ասում եմ՝ յուրաքանչյուր երեխայի մեջ կան կարողություններ, անհրաժեշտ է պարզապես բացահայտել դրանք: Ես կասեի՝ մաթեմատիկան բարդ չէ, մաթեմատիկան գեղեցիկ է»:

Ուսանողները, որոնք պատրաստվում են դասավանդել դպրոցում, պետք է հասկանան՝ նախ և առաջ պետք է կարողանալ դասարանում ապահովել սովորողների հոգեբանական անվտանգությունը, այն է՝ հավատ ներշնչել սեփական ուժերի նկատմամբ, օգնել՝ չվախենալ սխալվելուց և այլն:

Երկօրյա գիտաժողովում քննարկվեցին ամենատարբեր հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծումներ են պահանջում, արագ փոփոխվող և զարգացող աշխարհի համապատկերում գիտաժողովի մասնակիցներն արժևորեցին մաթեմատիկական կրթության դերը՝ փորձելով սեփական փորձն ու փորձառությունը կիսել իրար հետ՝ որպես զարգացման ու առաջընթացի կարևոր բաղադրիչ:

Հանրապետական գիտագործնական կոնֆերանս

Մանկավարժական համալսարանում անցկացվեց հանրապետական գիտագործնական կոնֆերանս՝ նվիրված ՀՊՄՀ 100-ամյակին: Այն կազմակարպել էին Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը և Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Ներկաներին ողջունեց և կոնֆերանսի կազմակերպման նախաձեռնությունը, ինչպես նաև զեկուցումների թեմաները կարևորեց Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Սադոյանը:

Աշխարհագրության տարբեր ոլորտներն ընդգրկող գիտաժողովում զեկուցումով հանդես եկավ աշխարհագրական գիտությունների դոկտոր Գևորգ Կարապետյանը: Նա խոսեց զբոսաշրջության և ռեկրեացիայի կազմակերպման համար ատլասային քարտեզագրական հիմնավորումների անհաժեշտության մասին՝ ներկայացնելով դրանց կատարման սկզբունքները և պրագմատիկ նշանակությունը:

Զեկուցողն արդիական համարեց զբոսաշրջության և տուրիզմի զարգացմանը խթանող քայլերը՝ այդ համատեքստում ընդգծելով քարտեզագրական հիմնավորումների անհրաժեշտությունը:

Գ. Կարապետյանը նկատեց այն բացը, որ կա հանրապետությունում, և որի մասին առաջին անգամ բարձրաձայնում է՝ տուրիզմը պետք է հիմնավորել քարտեզագրումով: Վերջինս խոսեց քարտեզագրման կարևորության, առանձնահատկությունների, միջազգային նշանների օգտագործման անհրաժեշտության, ինչպես նաև նրանում թույլատրելի և ոչ թույլատրելի սխալների մասին:

Առաջիկայում հանրության դատին կներկայացվի զեկուցողի կողմից նոր ստեղծված ատլասի մոդելը, որում զետեղվել են 80-82 քարտեզներ և որտեղ ներկայացվել են Հայաստանի մարզերի ռեկրեացիոն և զբոսաշրջային ռեսուրսները: Գ. Կարապետյանը կարևորեց սոցիալ-տնտեսական և մյուս ռեսուրսների համադրումը քարտեզում, ինչը կարող է առավել օգտակար լինել զբոսաշրջությամբ զբաղվող կազմակերպությունների համար:

Երևանի պետական համալսարանից Ռենա Վարդանյանի զեկուցումը վերաբերում էր երկրի (պետության) ճանաչելի կերպարին՝ որպես զբոսաշրջային դեստինացիայի գրավիչ իմիջի ստեղծման չափանիշի:

Զեկուցողն անդրադարձավ տարբեր երկրները ճանաչելի դարձնող խորհրդանիշերի՝ մանրամասնելով, թե որ երկիրը ինչի հետ են ասոցացնում մարդիկ և հատկապես ՁԼՄ-ները:

Ներկայացնելով Հայաստանը ճանաչելի դարձնող մի շարք խորհրդանիշներ՝ Արարատ լեռը, խաղողի վազը, նուռը, ծիրանը, ծիրանափողը, հայկական կոնյակը, զեկուցողն ընդգծեց, որ երկրի կերպարը ներկայացնելու համար պետք է ունենալ երկրի կերպարի ռեալ պատկերը, որ կարելի է վերցնել այլ խորհրդանիշներ ևս և դրանք բրենդավորել՝ առաջացնելով դրական զգացողություններ, այս կերպ նաև ձևավորելով երկրի իմիջը:

Ռենա Վարդանյանը նկատեց, որ ի տարբերություն այլ երկրների, այդ իմաստով մեր երկիրը ինքնաբավ չէ, և որ երկրի ինդուստրիան հանրահռչակելու առումով պետք է օգտագործել հնարավոր բոլոր ռեսուրսները:

Կոնֆերանսի մասնակիցները մի շարք հարցեր ուղղեցին զեկուցողին, այդ թվում կարևորելով մեր երկրի հոգևոր-պատմամշակութային և այլ խորհրդանիշներ ևս, նաև շեշտադրելով երկրի անվտանգության ապահովման խնդիրը:

ՀՊՄՀ-ից Վարդուհի Հովհաննիսյանը հանդես եկավ «Լանդշաֆտագիտական գիտելիքների դեր բուհական աշխարհագրության ուսուցման համատեքստում» խորագրով զեկուցումով:

Նա մասնավորապես ընդգծեց, որ միջազգային պայմանագրի առկայությունը ենթադրում է մեր կողմից լանդշաֆտների պահպանում, կառավարում և պլանավորում:

Զեկուցողը խոսեց վերջին շրջանում ակտիվացած մարդ-բնություն կապի մասին՝ ընդգծելով, որ լանդշաֆտագիտությունը սերտորեն կապված է էկոլոգիայի, ինչպես նաև ֆիզիկական աշխարհագրության հետ:

Վ. Հովհաննիսյանն անդրադարձավ լանդշաֆտագիտության զարգացման փուլերին՝ ամփոփելով, որ աշխարհագրական կրթության մեջ անգնահատելի է լանդշաֆտագիտական գիտելիքների դերը: Գիտության այս ճյուղը ժամանակի ընթացքում կունենա նոր ծրագիր և ուղղություններ՝ ի բարօրություն մեր մոլորակի բնակչության:

Հանրապետության տարբեր բուհերից գիտաժողովին մասնակցող և մեր համալսարանի մասնագետներն իրենց զեկուցումներում անդրադարձան աշխարհագրության մերօրյա կարևոր հիմնախնդիրների՝ դրանք դիտարկելով ժամանակի ու երկրի ռեսուրսների համատեքստում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Սերունդների խաչմերուկ

Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի նախադպրոցական մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ կայացավ «Սերունդների խաչմերուկ» խորագրով միջոցառում:

Միջոցառումը յուրատեսակ խաչմերուկ էր, որում հանդիպեցին տարբեր սերունդները՝ նախադպրոցական տարիքի երեխաներ, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի ավագ և երիտասարդ դասախոսներ, նույն ամբիոնի մագիստրոսներ և երախտավորներ:

Բուհի ռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց սերունդների խաչմերուկում հանդիպած աբովյանականներին, որոնց միավորում է միևնույն առաքելությունը՝ սովորեցնել սովորեցնելը:

Ռեկտորը հպարտությամբ նշեց՝ իր մասնագիտական ուղին սկսել է հենց նախադպրոցական կրթության ամբիոնում: Նա երախտագիտությամբ հիշեց նախադպրոցական մանկավարժության երախտավորներին, որոնք կարողացել են կրթել յուրատեսակ ոճ և ձեռագրաբանություն ունեցող մասնագետներ, ոլորտի նվիրյալներ:

«Մանկավարժը չի կարող աշխատել նախադպրոցական հաստատությունում, եթե չունի անսահման սեր և մեծագույն նվիրում երեխայի և նրա հետաքրքրությունների նկատմամբ: Նախադպրոցական տարիքում է կերտվում հերոսը, վաղվա քաղաքացին»,-նշեց Սրբուհի Գևորգյանը և 100-ամյակի միջոցառումների շարքում կարևորեց ձեռնարկը. այն ոչ միայն սերունդների, այլև մոտեցումների և ժամանակների պահանջների խաչմերուկ է:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը շնորհավորեց ներկաներին ինչպես հարազատ կրթօջախի մեկդարյա հոբելյանի, այնպես

էլ սերունդների խաչմերուկում հանդիպելու, միմյանց շնորհակալ լինելու և անցած ուղին վերարժևորելու համար:

«Աստվածներն ու երեխաներն ապրում են այնտեղ, որտեղ նրանց սիրում են: Այդ տեղը հենց Մանկավարժական համալսարանն է»,-հին իմաստությունը մեջբերեց Հեղինե Խաչատրյանն ու վերահաստատեց հարազատ կրթօջախի հանդեպ իր սերն ու նվիրումը:

Սերունդներին մեկ խաչմերուկում միավորելու գաղափարը Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Մանուկյանինն է: Հպարտ է՝ ղեկավարում է ամբիոն, որն ունի պատմություն, գիտական հենք և վստահություն, որ ունենք գիտական հանրությանը փոխանցելու նոր գաղափարներ, մեթոդներ:

«Ուսուցիչը նա չէ, ով սովորեցնում է, այլ նա, ումից ցանկանում են սովորել: Այսօր էլ ուզում ենք սովորել, լսել մեր ուսուցիչներին»,-նշեց Արմինե Մանուկյանն ու բեմ հրավիրեց սերունդներին, որ «խաչմերուկում» քննարկեն հարցեր, լսեն առաջարկներ, տեսակետներ, գտնեն լուծումներ:

Բեմը վերածվեց մասնագիտական կարծիքների բախման խաչմերուկի, ուր քննարկվեցին նախադպրոցական կրթության համակարգի մի շարք խնդիրներ և ժամանակակից մարտահրավերներ, սոցիարցումների արդյունքում ձևավորված խնդրահարույց հարցեր՝ 20-րդ և 21-րդ դարի պրիզմայով:

Թեև շատ դեպքերում սերունդներն ունեցան կարծիքների բախում, բայց եղան նաև համաձայնություններ. դա հենց այն «խաչմերուկն» էր, որտեղ նրանց միավորում էր մասնագիտական միասնությունը և նվիրյալ մանկավարժի կարևոր մեթոդը՝ «երեխան սիրում է, երբ իրեն սիրում են»:

«Սերունդների խաչմերուկ»-ում անակնկալների պակաս չկար, իսկ ամենագեղեցիկը պարգևատրման արարողությունն էր, որն անակնկալ էր նաև բուհի ռեկտորի համար. նախադպրոցական մանկավարժության երախտավորներին Սրբուհի Գևորգյանը հանձնեց «Նախադպրոցական կրթության երախտավոր» հուշամեդալ: Նույն մեդալով պարգևատրվեց նաև բուհի ռեկտորը՝ իր ողջ մասնագիտական ուղին հարազատ կրթօջախի հետ կապելու և նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ոլորտում ունեցած ավանդի համար:

«Սերունդների խաչմերուկ»-ը շարունակվեց վարպետության դասով. ամբիոնի պրոֆեսորներ Ալլա Դալլաքյանը, Վաչագան Նավասարդյանը, դասախոսներ Արևիկ Խուգեյանը, Իրինա Պոնոմարենկոն, Մարիաննա Ամիրաղյանը, Ա. Սիմոնյանը ներկայացրին նախադպրոցական ուսումնական հաստատություններում տարբեր տեխնոլոգիաների կիրառման նոր մոտեցումներ, մեթոդներ և խաղ-վարժանքներ: Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Մանուկյանը ներկաներին, որոնց թվում էին նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներկայիս տնօրեններ, հորդորեց՝ կրթական, գիտական և մեթոդական բոլոր հարցերով դիմել այդ հարցերով զբաղվող հանրապետության միակ գիտական կենտրոն Մանկավարժական համալսարանի մասնագիտական ամբիոնին:

Միջոցառման ընթացքում ելույթ ունեցավ նաև Սկզբնական կրթության ֆակուլտետի երգչախումբը՝ պրոֆեսոր Վաչագան Նավասարդյանի ղեկավարությամբ: Վերջինս տեղեկացրեց, որ սա ուսանողների երգչախմբի անդրանիկ կատարումն էր, և օրը հռչակեց իբրև «Շողեր» երգչախմբի ծննդյան օր:

«Սերունդների խաչմերուկ»-ի հրաժեշտի ակորդը ամենակրտսեր սերնդին էր վերապահված. բեմում Երևանի քաղաքապետարանի № 43 նախադպրոցական ուսումնական հաստատության սաներն էին, որոնք հանդես եկան «Շունն ու կատուն» երաժշտական ներկայացմամբ:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

«Ուսուցչի շարունակական մասնագիտական զարգացումն այլընտրանք չունի»,-

ասում է Ժաննա Անդրեասյանը

Հանրապետության մարզերի 47 դպրոցների 150 ուսուցիչներ 12 մասնագիտությունների գծով Մանկավարժական համալսարանում անցան հերթական պարտադիր ատեստավորման վերապատրաստում:

Ուսուցիչներին շնորհավորեցին և հավաստագրեր հանձնեցին ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը և ԿԳՄՍ նախարարի տեղակալ, Մանկավարժական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը:

Ռեկտորը խոսեց 100-ամյա բուհի առաքելության՝ ուսուցչական կադրերի պատրաստման գործընթացի, բարեփոխումների ու առաջընթացի մասին: 100 տարին քիչ չէ նման գործունեություն իրականացնելու համար, որը նպաստել է գաղափարախոսության փոփոխմանը, ժամանակակից ոլորտներին համահունչ ծրագրերի ներդրմանը, ընտրությանը, չափանիշների հստակեցմանը, կրթության ոլորտի, ուսուցիչների ծրագրերի արդիականացմանն ու վերանայմանը:

«Համալսարանն ընտրել է լավագույն վերապատրաստողներին, և շատ կարևոր էր ունենալ դպրոցը ճանաչող, ուսուցիչների կարիքները հետազոտած, համապատասխան առաջարկություններ ունեցող անձանց համախումբ, որի հետ քննարկման արդյունքում վերանայվել են բոլոր փաթեթները»,-ասաց ռեկտորը:

Սրբուհի Գևորգյանը վստահեցրեց, որ հետադարձ կապի միջոցով կուսումնասիրվեն բոլոր առաջարկություններն ու դիտողությունները՝ գործընթացն ավելի լավը դարձնելու համար:

Շնորհավորելով ուսուցիչներին՝ նա ևս մեկ անգամ հավաստեց՝ մշտապես լինելու ենք դպրոցի և ուսուցչի կողքին:

«Ուսուցչի վերապատրաստման գործընթացը դիտում ենք որպես ուսուցչին ուղղված մեր քաղաքականության մի շատ կարևոր բաղադրիչ,-ասաց ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:-Ուսուցչի շարունակական մասնագիտական զարգացումն այլընտրանք չունի, որովհետև, դասարան մտնելով, դուք պետք է պատրաստ լինեք պատասխանելու աշակերտների բոլոր հարցերին, պետք է նրանց ծանոթացնեք նորին և ուղղորդեք»:

Նախարարի տեղակալն ուրախությամբ նշեց, որ Մանկավարժական համալսարանը մշտապես կապի մեջ է ուսուցիչների հետ, իսկ Մանկավարժականում վերապատրաստումը նախընտրած ուսուցիչների համար դա փոխադարձ գործընթաց է. ուսուցիչները նոր գիտելիքներ են ստանում դասախոսներից, վերջիններն էլ ուսուցիչներից ստացած տեղեկությունների շնորհիվ կարողանում են վերանայել ներբուհական ծրագրերը:

Կարևորելով պարտադիր վերապատրաստման գործընթացը՝ նախարարը նշեց, որ այն փոխկապակցված է ուսուցչի տարակարգի հետ, որտեղ մեծ տեղ է տրվում վերապատրաստման ընթացքում կուտակած գիտելիքներին ու փորձառությանը: Նաև ասաց, որ առաջիկայում ներկայացնելու են վերախատրաստման նոր համակարգ, որն ամբողջովին հիմնված է լինելու ուսուցիչների կարիքների վրա, ինչը կնպաստի նրանց աշխատանքի որակին ու արդյունավետությանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Միջազգային գիտագործնական կոնֆերանս

Մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումները շարունակվում են: Հերթական միջազգային գիտագործնական գիտաժողովը կազմակերպել էր համալսարանի Արտասահմանյան գրականության ամբիոնը: Առկա և հեռավար ձևաչափով անցկացվող գիտաժողովին իրենց մասնակցությունն էին բերել Հայաստանի, ՌԴ-ի և Ուկրաինայի առաջատար բուհերի մասնագետներ, ինչպես նաև մագիստրոսներ:

Մանկավարժական համալսարանի Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ողջունեց մասնակիցներին՝ ընդգծելով, որ «Պուշկինի ինստիտուտ» ռուսաց լեզվի ուսուցման թեստավորման կենտրոնը դարձել է յուրօրինակ վայր, ուր մշտապես «հանդիպում են» երկու բարեկամ երկրների անցյալը, ներկան և ապագան:

Պրոռեկտորն արժևորեց տարիների աշխատանքը, որ իրականացվել է ամբիոնի կողմից՝ գրքերի տպագրություն, գիտական տարբեր ձեռնարկներ, որոնց շնորհիվ Պուշկինի կենտրոնի աշխատանքը նկատելի հաջողություններ է գրանցել՝ ուսանողներին և դասախոսներին միավորելով տարբեր միջոցառումների շուրջ:

Ներկա ժամանակի բարդ և հակասական շրջափուլում պրոռեկտորն ընդգծեց գիտելիքների ձեռքբերման անհրաժեշտությունը՝ ներկաներին մաղթելով ակտիվ երկխոսություն և փոխշահավետ շփումներ:

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը վստահեցրեց՝ գիտաժողովում քննարկվող թեմաները գիտական կարևոր նշանակություն ունեն, իսկ արտասահմանյան գործընկերների հետ շփումներն առաջիկայում տեսանելի կլինեն նաև համալսարանի այլ ձեռնարկներում:

Գիտաժողովի զեկուցումները մեկ ժողովածուի մեջ ամփոփելը կարևորեց Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ռուզան Թադևոսյանը, ով ընդգծեց՝ ժողովածուն նախատեսված է դասավանդողների, ասպիրանտների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են ժամանակակից գրականության և լեզվաբանության ձեռքբերումներով:

Միջազգային գիտագործնական գիտաժողովն անդրադարձավ գրական-թարգմանական մի շարք հիմնախնդիրների, հայ և ռուս գրական փոխկապերին և երկու երկրների գրականության դերին համաշխարհային գրականության մեջ:

«Ա» տառի հանդեսը համալսարանական դպրոցում

«Սովորել տառերը՝ նշանակում է երգել, կարդալ, գրել, արտասանել…». համալսարանական №57 դպրոցի 1-ին «բ» դասարանի 35 աշակերտի կյանքում կարևոր իրադարձություն էր հայոց այբուբենի առաջին տառը սովորելը, ինչը նշանավորվեց հանդեսով: Դասղեկ Տաթև Աբրահամյանի ղեկավարությամբ առաջին դասարանի աշակերտները դպրոցի ճաշակով ձևավորված սրահում Մաշտոցյան այբուբենի բանալին հանդիսացող «Ա» տառի ուսուցումը վերածեցին գեղեցիկ ու լուսավոր տոնի:

«Այսօրվանից մենք սովորելու ենք հայերենի տառերը»,-հպարտությամբ ասացին երեխաները՝ այն անվանելով «մեծ հեղաշրջում» իրենց «փոքրիկ կյանքում»:

Նրանք զույգ-զույգ ներկայացրին իրար՝ կես՝ լուրջ, կես՝ կատակ «գաղտազերծելով» իրար բնութագրող կարևոր հատկանիշները:

Փոքրիկ արևների նման նրանք ժպտացին ու բարևեցին հանդիսատեսին, ապա երգ ու ասմունքով ներկայացան.

Առաջին «բ»-ի փոքրիկներն ենք՝
20 քաջ տղա և 15 նազուկ աղջիկ…

Առաջին դասարանցիները վստահեցրին՝ «Մի քանի տարուց թևեր կառնենք ու թևերը մեր լայն ու լայն բացած՝ հեռուն կշրջենք»…

Այս մանուկներին թև կտան գիտելիքները, որ սովորելու են տառերի օգնությամբ, որոնք էլ կսովորեցնեն ճանաչել շրջապատող աշխարհը, սիրել հայոց լեզուն ու հայրենիքը, ծննդավայրը, ծնողներին և ուսուցիչներին:

Խելացի աչքերով փոքրիկների շուրթերին հայոց ոսկեղենիկ լեզուն անկեղծ ձոն էր՝ ուղղված դասին ու դասարանին, այբուբենին ու հայոց գրերին, նրանով աշխարհի գաղտնիքները բացելու բանալի. «Դու լավ ընկեր ճանապարհի, դու բանալի մեր ցանկալի…»:

Ապա հնչեցին ջերմ խոսքեր՝ ուղղված դպրոցին, որի գրկում պետք է հասակ առնեն, իմաստնանան:

Երեխաներն արագ գուշակեցին հանելուկների պատասխանները, առաջին տառով կազմեցին բառեր՝ աստված, աստվածաշունչ, արև, աստղեր…և դիմավորեցին թագազարդ «Ա» տառին:

Փոքրիկները հանդեսը եզրափակեցին խաղաղության մասին իրենց ցանկությունները բարձրաձայնելով ու ծածանելով ճերմակ աղավնիներ: Փոքրիկ են, բայց նրանց զգայուն հոգիներն էլ են զգում դարի տագնապը, որ պատերազմներով ու տարբեր աղետներով սպառնում է երկիր մոլորակին:

Միջոցառումն ամփոփեց դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը: Նա գովեստի խոսքեր հղեց 1-ին«բ» դասարանի սովորողներին, դասվար Տաթև Աբրահամյանին և այն թիմին, որի ներդրած ջանքի ու եռանդի շնորհիվ կայացավ միջոցառումը՝ փոքրիկների մեկ օրը դարձնելով արտասովոր ու գեղեցիկ, ուսանելի և առինքնող:

«Սա ձեր դպրոցական նոր-նոր սկսվող կյանքի առաջին միջոցառումն էր, և դուք ցույց տվեցիք, թե մեկուկես ամսվա ընթացքում որքան գիտելիքներ եք ձեռք բերել:

Թող որ ձեր շուրթերից հնչած խաղաղության խոսքերն իսկապես խաղաղություն բերեն մեր երկրին, և դուք ապրեք ու սովորեք միայն խաղաղ երկնքի ներքո»,-ասաց տնօրենը՝ փոքրիկներին մաղթելով լավ սովորել և գիտելիքով զինված դառնալ հայրենիքի պահապաններ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Արդի սոցիալ-տնտեսական գործընթացը մեր երկրում բնորոշվում է նաև մարդկանց ունեցվածքի, նրա ծագման աղբյուրների և բնույթի, բաշխման և վերաբաշխման գործոններով: Նման բազմաշերտ պայմաններում, անշուշտ, դժվար է ճիշտ կողմնորոշվել բնակչության ունեցվածքի նկատմամբ հարկային քաղաքականության մեջ: Այնինչ, վերջինս մակրոտնտեսական հավասարակշռության գրավականն է, տնտեսական առաջընթացի կարևոր պայմանը: Պատահական չէ, որ բոլոր ժամանակների տեսական և գործնական տնտեսագիտության երևելիներն ընդգծել են հարկային ճիշտ քաղաքականության հանգուցային դերը տնտեսության կազմակերպման և զարգացման գործում:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց գույքի արդարացի հարկման հիմքում, վերջին հաշվով, ընկած է նրանց սեփականատիրական հարաբերությունների բնույթը: Ուստի փոքր-ինչ հանգամանորեն պետք է քննարկել դրանք:

Բնակչության սեփականությունն ավանդաբար անվանվում է «անհատական սեփականություն», ինչը, հենց եզրույթի կոչով, նշանակում է առանձին անհատին պատկանող ունեցվածք: Սակայն այդ ձևական միասնությունը բնույթով բնավ միատարր չէ: Անհատական սեփականությունն իր օբյեկտներով և նպատակային օգտագործումով ունի երկու տարբերակում: Առաջինը մասնավոր սեփականությունն է, որի օբյեկտներն են արտադրության միջոցները (արտադրական մեքենաներ, սարքավորումներ, հող, անասուններ), որոնք հնարավորություն են տալիս իրենց տիրոջը՝ կազմակերպելու արտադրություն ինչպես սեփական, այնպես էլ մեծամասամբ ուրիշի աշխատուժի օգտագործմամբ, նպատակ ունենալով հավելյալ արժեքի (շահույթի) ստացումը, ինչու չէ, նաև հասարակության մեջ բարձր դիրքի գրավումը: Ի դեպ, 70-ամյա խորհրդային հասարակարգում թևածող մարքսիստական վարկածն այն մասին, որ իբր ուրիշի աշխատուժի օգտագործումը, ասել է թե մարդու կողմից մարդու շահագործումը պետք է դիտվի որպես հանցագործություն, այսօր էլ դեռևս ունի հոգեբանական որոշ ազդեցություն: Թերևս ոչ ոք չի պնդում, որ մարդը պետք է շահագործվի և հենց մարդու կողմից: Եթե շահագործումը դիտվի զուտ որպես այդպիսին, ապա ինչու էլեկտրակայանի, կամրջի, արտադրական կարողությունների շահագործումը մարդու կողմից ողջունելի է սոցիալ-տնտեսական զարգացման առումով, իսկ նույնը մարդու շահագործմանը չի վերագրվում: Իսկ որ ամեն մի շահագործում կարող է մարդու կողմից լինել, դա միանշանակ է: Ավելին, իսկ ո՞ւմ են փնտրում և խնդրում մեր գործազուրկները, եթե ոչ իրենց շահագործողներին: Մարդու շահագործումը ոչ միայն ապահովում է նրա և ընտանիքի կենսամիջոցները, այլև բացահայտում նրա՝ որպես անհատի, բազմակողմանի ունակությունները, որոնք այդպես էլ կմնային անհայտ գործազրկության, չշահագործման դեպքում: Այնպես որ, հասարակությունը տուժում է ոչ թե մարդու շահագործումից, այլ չշահագործումից (ինչը, դժբախտաբար, առկա է նաև մեզանում): Վերջապես չի կարելի մոռանալ, որ այսօրվա տնտեսական առաջնահերթություններից մեկը մարդկային կապիտալի զարգացումն է: Իսկ այն կարող է տեղի ունենալ միայն մարդու շահագործման դեպքում: Եթե կապիտալը այն արժեքն է, որը բերում է հավելյալ արժեք, իսկ դա անվիճելի է, ապա մարդը կապիտալի կարող է վերածվել միայն աշխատանքային շահագործման դեպքում՝ նաև ուրիշի կողմից:

Անհատական սեփականության երկրորդ ենթաձևը անձնական սեփականությունն է: Այն, ի տարբերություն առաջինի, տարածվում է սպառման առարկաների վրա, որոնք մարդիկ օգտագործում են իրենց անձնական պահանջմունքների բավարարման համար: Հասկանալի է, որ սեփականության այս ենթաձևը կարող է ունենալ միայն համեստ սպառողական բնույթ և չի կարող իր տիրոջը հնարավորություն տալ տնտեսական ակտիվ գործունեության, առավել ևս, հասարակական բարձր դիրք գրավելու:

Անհատական սեփականության հարաբերությունների այս հակիրճ վերլուծությունը, կարծում եմ, օգտակար կլինի հարկային քաղաքականության մշակման գործընթացում: Ինքնին հասկանալի է, որ մասնավոր սեփականության օբյեկտների հարկումն անհամեմատ բարձր կարող է լինել: Սակայն այստեղ է որ անհրաժեշտ է դրսևորել քաղաքականությունը: Իհարկե, արտադրության կազմակերպիչները տիրապետում են նյութական անհամեմատ բարձր հնարավորությունների (ինչու չէ, երբեմն նաև հասարակական բարձր դիրքի): Սակայն այն չի կարող իրավունքի հիմք լինել հարկավորման գործիքակազմով կասեցնել նրանց նյութական առաջընթացը: Ընդհանրապես, երբ անհրաժեշտ է լինում մտածել բնակչությանը օգնությամբ ապահովելու մասին, միշտ առաջին հերթին հիշվում են անապահով կամ սակավ ապահովված խավերը: Դա, իհարկե, ճիշտ է: Բայց դա առավել պարզ քաղաքականություն է՝ ինչ-որ ձևով իջեցնել հարկերը, ավելացնել եկամուտները: Գոյության և զարգացման համար օգնության կարիք ունեն նաև հասարակության ունևոր խավերը (գործարարներ, խոշոր սեփականատերեր), ըստ որում այստեղ տնտեսական քաղաքականությունն ավելի ճկուն և բարդ է ենթադրվում: Նախ, անհրաժեշտ է, որ մենք հարգանքով և հավատով վերաբերվենք հասարակության ունևոր խավերին՝ ձեռներեցներին, գործարարներին: Երկիրը հարուստ է, ամենից առաջ, իր նյութական հարստությամբ, որի հիմքի վրա կարող են բարձրանալ, բարգավաճել հոգևոր հարստությունը, մշակույթը և ամեն մի ազգային արժեք: Հասարակության ունևոր խավի նկատմամբ գիտակցված բարձր գնահատականը բարերար ազդեցություն կարող է ունենալ նաև նրա նկատմամբ տնտեսական ճիշտ քաղաքականության (այդ թվում՝ հարկային) վրա: Գիտականորեն հիմնավորված չափավոր հարկային քաղաքականությունը գործարար մարդկանց նկատմամբ կարող է, ըստ ամենայնի, նպաստել նրանց թվաքանակի աճին, ինչը, անշուշտ, անմիջականորեն կնպաստի տնտեսության ընդլայնմանը, ՀՆԱ-ի աճմանը և, որ ամենակարևորն է, գործազրկության, հետևաբար և արտագաղթի նվազմանը: Գործարար մարդկանց չափավոր հարկավորումը կարող է նպաստել նաև ներքին ներդրումների ընդլայնմանը: Այսօրվա դրությամբ մենք հազիվ թե մեծ հույսեր կարող ենք ունենալ դրսից կատարվելիք ներդրումների նկատմամբ: Երկրի անհանգիստ վիճակը, օրենսդրական դաշտի անկատարությունը, մեղմ ասած, բնավ չեն նպաստում դրանց առկայությանը: Կապիտալը խիստ զգուշավոր է, նա աղմուկ չի սիրում, իսկ նման դեպքում նա արագ թողնում է միջավայրը: Այսպիսի պայմաններում առավել հուսադրողը ներքին ներդրումներն են, ինչը հնարավոր կլինի հատկապես փողի սեփականատերերի նկատմամբ հարկային մկրատի չափավոր օգտագործման դեպքում, նկատի ունենալով նաև, որ հիշյալ անձինք առավել արհեստավարժ են գործարարության մեջ, քան նորեկներից շատերը: Վերջապես հարկային քաղաքականությունն մշակելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն ոչ մի դեպքում չի կարող վերաբերել բնակչության այս կամ այն շերտերին՝ առանց շոշափելու ամբողջ հասարակության տնտեսական շահերը: Ավելին, բարձր չափերով հարկված որոշ խավեր գրեթե չեն տուժում դրանից: Հիշենք, որ տնտեսական գործունեությամբ զբաղված մարդիկ հարկերը գրեթե նույնությամբ փոխանցում են իրենց կողմից արտադրվող կամ վաճառվող ապրանքների գներին, որոնց համար վճարում է ամբողջ բնակչությունը: **Ասել է թե մեկի ուղղակի հարկը մյուսի համար դառնում է անուղղակի**: Վերջին հաշվով, բոլորի բոլոր հարկերը վճարում են բոլորը:

Վերադառնալով բնակչության անհատական սեփականության մասնավոր և անձնական ենթաձևերի բաժանմանը, նրանց տարբերիչ հատկանիշներից մեկը համարվում էին օբյեկտները: Առաջին դեպքում՝ արտադրության միջոցներ, երկրորդ դեպքում՝ սպառման առարկաներ: Սակայն որակական առումով այդ բաժանման հիմքում պետք է դնել օբյեկտների նպատակային օգտագործումը: Վերջինս կարող է փոխել անգամ տվյալ օբյեկտի բնական որակը: Ասենք եթե բնակարանը, ավտոմեքենան, կարի մեքենան օգտագործում են սեփական ընտանիքի պահանջմունքների բավարարման նպատակով, ապա դրանք սպառման առարկաներ են. բնակարանը վարձակալությամբ, կարի մեքենան ուրիշի սպասարկմանը տրամադրելու դեպքում դադարում են անձնական սպառման բարիքներ լինելուց, վերածվելով լրացուցիչ եկամուտի ստացման աղբյուրի՝ մասնավոր սեփականությանը: Նպատակային օգտագործման բնույթն է որոշում նաև բազմաթիվ բարիքների որակական պատկանելությունը: Միսը կամ միրգը ընտանիքում օգտագործվելու դեպքում սպառման առարկաներ են, իսկ երշիկի կամ պահածոյի կոմբինատներում՝ արտադրության միջոցներ:

Ակներև է, որ բնակչության անհատական սեփականությունը սպասածին չափով թափանցիկ չէ: Եվ միայն խորքային վերլուծությունը կարող է էապես գնահատել այն, ինչպես նաև ցույց տալ նրանց կողմնորոշիչ դերը հարկային քաղաքականության մեջ:

Մաքսիմ ՍԱՐԳՍՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
(տպագրվում է հետմահու)

«Հայ գրականությունը և մշակույթը հայորեն գոյատևելու գրավականն են»

Մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում լիբանանահայ բանաստեղծ, արձակագիր, «Խոսնակ» ամսագրի երկարամյա խմբագիր, «Մովսես Խորենացի» մեդալակիր Համբիկ Մարտիրոսյանը հանդես եկավ դասախոսությամբ:

Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը ներկայացնելով հյուրին՝ ասաց, որ նրա ակունքները գալիս են Սեբաստիայից, նաև ընդգծեց, որ Լիբանանն այսօր տագնապի օրեր է ապրում, ինչը չի խաթարում Բեյրութում Համբիկ Մարտիրոսյանի և մյուս նվիրյալների աշխատանքը:

Համբիկ Մարտիրոսյանի «Լիբանանահայ կյանք. գրականություն և մամուլ» խորագրով դասախոսությունը 1921 թվականին ձևավորված լիբանանյան հայ գաղութի՝ մարտահրավերներով լեցուն կյանքի մասին էր: Բանախոսը ներկայացրեց հայաշունչ գաղութի առանձնահատկությունները, հասարակական-մշակութային կյանքը, որ ամեն պատերազմական իրողության հետ փոփոխվում է:

Մեծ դեր ու նշանակություն վերապահելով մամուլին՝ խմբագրի իր երկար տարիների փորձառությամբ Համբիկ Մարտիրոսյանը շեշտադրեց, որ ժողովրդի հետ երկխոսելու իրական ճանապարհն է, և ոչ միայն: Հենց մամուլի տարեգրության մեջ կարելի է հանդիպել լիբանանահայ գրական նշանավոր դեմքերին, գրողներին, որոնք իրենց ստեղծագործություններով առաջնորդում են սերունդներին, ուղղորդում նրանց, հետ պահում ուծացման վտանգներից՝ ակտիվ գրական միջավայր ստեղծելով:

Բանախոսը ցավով նկատեց, որ մինչև 1975 թվականը կրթական և մշակութային լիաբուռն կյանքով ապրող համայնքն այսօր ծանր ժամանակների է դիմագրավում. պատերազմի պատճառով փակվել են շուրջ քսանութ հայկական վարժարան, կենտրոններ, շարունակվում է հայության գաղթի նոր փուլը:

Սակայն, ինչպես բոլոր ժամանակներում, լիբանանահայությունը շարունակում է պայքարել. Այդ պայքարի հիմնական կրողներն են Լիբանանում գործող երեք օրաթերթերը և Սփյուռքի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Հայկազյան համալսարանը:

«Հայոց լեզուն, հայ գրականությունը և մշակույթը հայորեն գոյատևելու գրավականն են»,-ամփոփեց Համբիկ Մարտիրոսյանը:

Նա ներկայացրեց իր ստեղծագործություններից, ապա ուսանողներին նվիրեց իր հեղինակած գրքերից:

Դասի ամփոփում համալսարանում

Համալսարանական դ57 հիմնական դպրոցի 9 «ա» և 9 «բ» դասարանների աշակերտները դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Սիրանուշ Կարապետյանի նախաձեռնությամբ ՀՊՄՀ Ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում մասնակցեցին «Քառակուսային ֆունկցիաներ» դասի ամփոփմանը: Դպրոցականները մեծ հետաքրքրությամբ լսեցին ամբիոնի ասիստենտ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Գուրգեն Ասատրյանի վարած դասը՝ ակտիվ մասնակցություն ցուցաբերելով ամփոփիչ դասին:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանը ողջունեց դպրոց-համալսարան կապը և դասի ամփոփման նման ձևաչափը համալսարանում:

Համալսարանական դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Սիրանուշ Խաչատրյանը վստահեցրեց, որ նման համատեղ ձեռնարկներն ու ամփոփիչ դասերի անցկացումը համալսարանի դասախոսների կողմից կլինեն շարունակական, ինչը կնպաստի դպրոց-համալսարան կապի էլ ավելի սերտացմանը:

Քայլում եմ երազանքիս ճանապարհով...

Ի՞նչ ես կարծում, ընթերցո՛ղ...

...Մասնագիտության ընտրության հարցը ամենա-ամենահաճախ քննարկվողներից ու ամենաբարդ որոշվողներից է: Շատ դեպքերում անչափ դժվար է կողմնորոշվել, վերջնական եզրակացության գալ, որովհետև կան հարցեր... հարցեր, որոնց պատասխանները տրվում են մեր կամքից անկախ, ինչ-որ դեպքից կամ երևույթից դրդված: Ահա, այդ բարդ կողմնորոշվողներց մեկն էլ ես էի:

Դեռ վաղ մանկուց ինձ տեսնում էի ամենատարբեր մասնագիտություններում, բայց ավելի հասուն տարիքում որոշեցի դառնալ մանկավարժ, ուսուցիչ, թերևս ամենապատվաբերներից մեկը: Չէ՞ որ, մանկավարժը մասնագիտություն է, ուսուցիչը՝ կոչում: Լինել մանկավարժ՝ նշանակում է լինել և՛ հոգեբան, և՛ դաստիարակ, և՛ ուսուցիչ, ինչու չէ նաև՝ ծնող: Ուսուցիչը մեր վաղվա սերունդը կրթողն ու դաստիարակողն է:

Երկար մտածելուց ու տատանվելուց հետո չվարանեցի նաև համալսարանի ընտրության հարցում. տարիներ շարունակ երազում էի ոտք դնել Հայկական պետական մանկավարժական համալսարան: Անսահման նվիրվածությունս, հավատս, անխախտ որոշումս հայոց լեզվին ու գրականությանը հուշեցին ինձ ընտրել Բանասիրական ֆակուլտետը, ուր թևածում են սերը, ջերմությունը, միմյանց նկատմամբ խոր հարգանքն ու գիտելիքների հարուստ պաշարը:

Առաջին քայլն արված է... Ահա՛ քայլում եմ երազանքիս ճանապարհով: Գրեթե մեկ տարի է այս ֆակուլտետի ուսանողն եմ ու տեսնում եմ, որ սա մի ուրիշ աշխարհ է, իմ աշխարհը, ուր զարգանում է իմ աշխարհայացքը, քայլ առ քայլ իրականանում են իմ բոլոր սպասելիքները: Յուրաքանչյուր դասախոս պատրաստ է օգնել ուսանողին, մայր լեզուն սովորելու, սովորեցնելու բանաձևը կյանքի նշանաբան դարձնել:

Ֆակուլտետում սիրով ուսումնասիրում ենք ամենատարբեր առարկաներ, արդյունքում՝ զարգանում նաև այլ ոլորտներում: Հայ հին և միջնադարյան գրականության շրջանակներում ծանոթանում ենք հանճարների գործերին, փորձում ենք թակել հայոց լեզվի անսահման գեղեցիկ, ճկուն, ճարտար, բայց միևնույն ժամանակ բարդ ու հետաքրքիր աշխարհի դուռը:

Ֆակուլտետը հարազատ է դարձել, մթնոլորտը սպասվածից էլ ջերմ է, ջերմագույն: Չնայած այս կարճ ժամանակահատվածին՝ համոզված եմ, որ ճիշտ եմ թե՛ մասնագիտության և թե՛ համալսարանի ընտրության հարցում: Լիահույս եմ, որ դասախոսական կազմի տված գիտելիքների հարուստ պաշարով ու լավ մանկավարժ դարձած կավարտեմ համալսարանն ու հպարտությամբ կնայեմ ծնողներիս փայլող աչքերին:

Անի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
1-ին կուրս

«Շնորհաշատ շրջանավարտներ»

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Շնորհաշատ շրջանավարտներ» խորագրով հերթական ցուցադրությանը՝ նվիրված Մանկավարժական համալսարանի հոբելյանին, ներկայացվել էին ֆակուլտետի շրջանավարտ Նոննա Դավթյանի և նրա սաների աշխատանքները:

Նոննան ապրում և աշխատում է Ստեփանավանում, ուր հիմնադրել է սեփական ստուդիան: Նա ցուցահանդեսին ներկայացրել էր իր սաների շուրջ 50 աշխատանք: Գունանկարներն ու գծանկարներն աչքի էին ընկնում թեմատիկ բազմազանությամբ:

Ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը շնորհավորեց և բարեմաղթանքի խոսքեր հղեց իր ուսանողուհուն և նրա սաներին՝ վստահ, որ մանկավարժի առաքելության մեջ իրենց շրջանավարտը հաջողել է:

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դոցենտ Սաթենիկ Մելիքյանն էլ կարևորեց մեկ տեղում տարիքային տարբեր խմբերի ստեղծագործողների աշխատանքների ցուցադրությունը:

Նոննան 2010 թվականին ավարտել է ՀՊՄՀ մագիստրատուրան: Հպարտ է, որ կարողանում է մանկավարժի նվիրումով իր սաների մեջ սեր արթնացնել արվեստի նկատմամբ, նկարել սովորեցնել:

Օգտվելով պատեհ առիթից՝ երեխաները շրջեցին ֆակուլտետի արվեստանոցներում, ծանոթացան ուսանողների աշխատանքներին, որպեսզի վառ տպավորություններով վերադառնան ծննդավայր:





Արվեստագետ - մանկավարժը

87 տարեկանում մահացել է Մանկավարժական համալսարանի երկարամյա դասախոս, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, կինոգետ Սուրեն Հասմիկյանը:

Սուրեն Հասմիկյանը ծնվել է 1935 թվականին, Երևանում: Դերասանուհի Հասմիկի թոռը ևս ընտրեց արվեստը, ավելին՝ ի պատիվ տատիկի, նաև ընտրեց «Հասմիկյան» կեղծանունը:

1957 թվականին Սուրեն Հասմիկյանն ավարտել է Երևանի պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ռուս գրականության բաժինը, 1961 թվականին կինոգիտության գծով Մոսկվայում ավարտել ասպիրանտուրան:

Ս. Հասմիկյանը առաջիններից է, ով գիտական ուսումնասիրության առարկա է դարձրել հայ կինոն: 1960-ականներին աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես խմբագիր: 1971-1982 թվականներին եղել է Հայաստանի Պետկինոյի գլխավոր խմբագիրը, 1989 թվականից՝ Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության կինոքննադատների կոլեգիայի նախագահ: 1968-1978 թվականներին հեռուստատեսությունում վարել է հայ կինոյին նվիրված հաղորդաշար: 1991 թվականին նկարահանվել է Վիգեն Չալդրանյանի «Չայն բարբառոյ...» ֆիլմում:

1972 թվականից Սուրեն Հասմիկյանն իրեն նվիրել է դասախոսական աշխատանքին. Մանկավաժական համալսարանում նա դասավանդել է կինոյի և ռեժիսուրայի պատմություն, կրթել ու դաստիարակել ապագա ռեժիսորների տարբեր սերունդներ: Շրջանավարտների և ընդհանրապես հանրության շրջանում նրան ճանաչում են որպես մեծ արվեստագետի և հանրագիտարանային գիտելիքների տեր մարդու:

Սուրեն Հասմիկյանը հայտնի է ավելի քան 1000 կինոքննադատական հոդվածներով, բազմազան սցենարներով, նաև հեղինակած գրքերով:

Արվեստագետի աշխատանքը մշտապես արժանացել է գնահատանքի. Այդ են վկայում նրա ստացած բազմաթիվ պարգևները:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է Սուրեն Հասմիկյանի ընտանիքին, հարազատներին: Արվեստի և մանկավարժության գիտակի ու նվիրյալի, իսկական մտավորականի գործը կմնա սերունդների հիշողության մեջ, գործ, որ կշարունակեն գործընկերները, ուսանողներն ու շրջանավարտները:

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂԸ

Միշտ ծրագրավորողներին անհետաքրքիր ու ոչ համակրելի եմ պատկերացրել, բայց այս մեկն այնքան ուրիշ էր, որ միանգամից գրավեց ինձ: Բարձրահասակ ու շեկ, խորաթափանց հայացքով ու տարօրինակ մեկն էր: Սիրում էր կոդեր գրել, արագություն ու դառը սուրճ: Լիովին իմ հակապատկերն էր: Ընդհանուր միայն մի բան ունեինք. երկուսս էլ խելագարի նման արագություն էինք սիրում: Մեր շփումը միշտ դժվար էր ստացվում, ու դա գնալով ինձ ավելի էր դուր գալիս: Չէր սիրում իրենից պատմել, ատում էր հեռախոսով խոսելն ու սոցիալական ցանցերը: Բայց մենք ժամերով հեռախոսով էինք խոսում, ու նա իրենից էր պատմում, իսկ երբ հեռախոսով խոսել չէր ստացվում, խոսում էինք սոցիալական ցանցերով: Ասում էր, որ բացառություններ միշտ են լինում, և ես նրա բացառությունն էի:

Ժամանակը շատ արագ անցավ. չհասցրեցի էլ հասկանալ, թե ոնց նա սկսեց ինձ դուր գալ: Իմ օրն առանց նրա չէր սկսվում ու չէր ավարտվում: Նա միշտ ուշ ժամի էր տուն գնում, իսկ ես անհամբեր նրա գալուն էի սպասում: Ես երբեք ոչ ոքի համար չէի անհանգստացել, բայց նա բացառությունս էր: Չէի կարողանում աչք փակել մինչև որ չզանգեր ու ասեր, որ տանն է ու հանգիստ կարող եմ քնել: Չէի կարողանում կտրվել նրանից, կլանում էի նրա ամեն մի բառը, ժամանակի ընթացքում էլ՝ իր բառերն ու շարժումները: Այնքան էի տարվել նրանով, որ սկսել էի նրա նման խոսել ու ծիծաղել:

Ծրագրավորողին դեռ չէի տեսել ու հույս էլ չունեի, որ օրերից մի օր նրան կարող եմ հանդիպել: Բայց մի օր, երբ զզզզված մազերով, տնային շորերով դուրս եմ գալիս խանութ, զանգ եմ ստանում, որ նա եկել է ինձ տեսնելու: Կյանքումս երբեք այսպես չէի մտածել տեսքիս մասին: Խառնվել էի իրար, բայց վերջապես հավաքեցի ինձ ու քայլեցի դեպի նա: Ինչքան նրան մոտենում էի, այնքան սիրտս սկսում էր ավելի արագ աշխատել: Վերջապես նրան տեսավ ու ինձ թվաց, թե գետինը փախչում է ոտքերիս տակից: Հեռվում կանգնած էր նա՝ բարձրահասակ շիկահերը: Փոքր-ինչ շփոթված էր և այս ու այն կողմ էր քայլում: Տեսանք, իրար փաթաթվեցինք: Մինչև այսօր հիշում եմ օծանելիքի բույրը: Գրողը տանի, նա այնքան շատ էր օծանելիք ցանել, որ ինձ թվաց կխեղդվեմ: Զգացվում էր՝ ամեն բան արել էր, որ ինձ դուր գար: Ամբողջովին սև էր հագնված, մազերը գեղեցիկ կողք էր սանրել: Գրողը տանի, նա այքան գեղեցիկ էր...

Սկսեցինք քայլել ու խոսել դեսից-դենից, չնայած...Չնայած չեմ էլ հիշում, թե ինչ էր խոսում. ես նրա կապտականաչ աչքերին էի նայում, որոնց մեջ մինչ օրս խորտակված եմ:

Հասանք մեր նստարանին, ես այդ օրվանից այդ անիծյալ նստարանը մերն եմ համարում: Նրանից շատ հեռու էի նստել, ինչը նրան դուր չէր գալիս ու անտանելի բարկացնում էր: Հասկացա ու նրան մոտ նստեցի: Չհասկացա, թե ինչպես հայտնվեցի նրա գրկում: Նրա ձեռքերն ուժեղ էին, իսկ նրա գրկում՝ ապահով էի:

Ժամանակը շատ արագ անցավ ու արդեն իմ տուն գնալու ժամանակն էր: Նա ինձ տուն ճանապարհեց ու մի որոշ ժամանակ էլ կանգնեց մեր պատշգամբի մոտ, քանի որ գնալուց հետո կարոտը նրան անտանելի խեղդելու էր:

Գնալուց հետո նստեցի մահճակալիս ու հասկացա, որ սիրահարվել եմ: Զգացմունքներն այնքան բուռն էին, որ չկարողացավ դրանք սանձահարել, ոնց միշտ էր անում, ու մի օր էլ շուրթերից դուրս թռան: Խոստովանեց...

Եթե կարողանայի ժամանակը հետ տալ, երբևէ չէի խոսի իմ զգացմունքների մասին: Երբեք չէին լինի երկար հեռախոսազանգեր, բազմաթիվ նամակներ, որոնք սկսվում ու ավարտվում էին «ես քեզ սիրում եմ» արտահայտությամբ: Չէին լինի բազմաթիվ տարօրինակ ու խելագար հանդիպումներ, որոնք միևնույն է, ավարտվելու էին: Նրա կողքին ես ինձ լավ էի զգում, նրա կողքին ես ինձ տանն էի զգում, նրա կողքին աշխարհը կանգ էր առնում, իսկ երբ նա ինձ համբուրում էր՝ սիրտս դադարում էր աշխատել:

Երբ միասին էինք՝ ես կորցնում էի ժամանակի զգացողությունը: Երբ կողքիս էր՝ իմ մտքերն ամբողջությամբ զբաղված էին նրանով: Միասին որոշում էինք, թե ինչպես ենք կահավորելու մեր ապագա տունը, ինչ գույնի էր լինելու մեր ննջասենյակը ու թե ով էր առավոտյան սուրճ պատրաստելու:

Բայց մի օր աշխարհն իսկապես կանգ առավ, որովհետև միայն այդ գրողի տարած փառատոններում հաղթող և մեծ էկրաններ բարձրացող ֆիլմերն են երջանիկ ավարտ ունենում, իսկ այդ «ծրագարվորողի ու ծրագրավորում չսիրող աղջկա» պատմությունը նույնիսկ չտպագրվեց թերթերում:

Չնայած նրան, որ գրողի տարած ծրագրավորողը լիովին նվիրված էր ինձ, իսկ երբ ինչ-որ բան մեր մեջ այն չէր, նա պարզապես տապալվում էր: Ծրագրավորողը, երբ սկսում էր խանդել, կորցնում էր իր վստահությունն իմ հանդեպ: Նրա անիծյալ խանդն իրեն ներսից էր տանջում ու քայքայում: Ու վերջում էլ այնքան քայքայեց, որ ինձ էլ կորցրեց ու բացի դրանից...

Ծրագրավորողն այնքան էր տարված իր կոդերով, որ մտածում էր՝ դրանցով ինձ էլ կկարողանա կառավարել: Բայց ա՛յ քեզ անհաջողություն՝ չկարողացավ ինձ կառավարելու կոդը գրել: Հետո ինձ վիրուսի տեղ դրեց ու փորձեց սահմանափակել, որ հանկարծ շատ արագ ու շատ խորը չներթափանցեմ: Բայց ա՛յ քեզ անհաջողություն՝ չգիտեր, որ ատում եմ սահմանափակումները:

Ծրագրավորողի գնալուց հետո շատ բան կորցրի: Կորցրի հիշողություններս, ապագայի միացյալ երազանքները, գրկախառնությունները, խելագար պահերն ու անմոռանալի հանդիպումները: Կորցրի այս ամենը, երբ կորցրի նրան: Ես լավ եմ հասկանում, որ անիծյալ ծրագրավորողի գնալուց հետո գիշերները ծանր է դարձել շնչելը ու առանց նրա հիմար կատակների քնելը: Բայց ահա ուրիշ մի բան ես կորցրի նաև այլ բաներ:

Ես կորցրի այն նամակներն ու հեռախոսային զանգերը, որը նա անտեսում էր: Ես կորցրի մանիպուլյացիան ու սուտը, խաբկանքն ու մեղադրանքները: Ես կորցրի խելագար ծրագրավորողին, ով չէր կարողանում տիրապետել իր զգացողություններին:

Եվ չնայած ծանր էր գիշերները խեղդվելն ու նրան կարոտելը, բայց կարևորը հասկացա, որ նա կորուստ չէ, որովհետև կորցնելով նրան՝ գտա իսկական եսս:

Հնարավոր է ես կորցրեցի ծրագրավորողին, բայց շահեցի շատ ավելին: Ես հաղթել եմ, վերադարձրել եմ ինձ իմ կյանքը:

Խելագար ծրագրավորող, ես շնորհակալ եմ քեզ: Դու ցույց տվեցիր, թե որքան ուժեղ կարող եմ լինել ես:

Սաբինա ԴԱՎԹՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ, պատմության բաժնի 2-րդ կուրս

Յուրա Արսենի ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ հումանիտար գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, «Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնի վարիչ (ամբիոնի հիմնադրման՝ 2006-ից մինչև 2016թ.)

Յուրի Արսենի Գասպարյանը ծնվել է 1940 թ. Գյումրի քաղաքում:

1959 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, որն ավարտել է 1964 թվականին.:

1970 թ. ստացել է տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Կիևի Տ. Շևչենկոյի անվան պետական համալսարանում:

1970-1990 թթ. պատասխանատու պաշտոններ է վարել ՀՍՍՀ ներքին գործերի մինիստրությունում:

1993 թ. Յ. Գասպարյանն ընդունվել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի դոկտորանտուրան և 1997թ. ստացել սոցիոլոգիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2000 թվականից ՌԴ հումանիտար գիտությունների ակադեմիայի իսկական անդամ է:

2006-ին հիմնադրվել է Սոցիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիան, որի հիման վրա հետագայում՝ 2009-ին, իր կողմից ստեղծվեց Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնը:

2009-ից Յ. Գասպարյանն աշխատել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ:

Յուրի Գասպարյանի հետաքրքրությունների հիմնական ոլորտներն էին ընտանիքի, երիտասարդության, կրթության, գիտության, կրոնի, քաղաքական և տնտեսական սոցիոլոգիայի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հիմնահարցերը:

Յ. Գասպարյանը հրապարակել է 135-ից ավելի գիտական աշխատություններ, երկու տասնյակ մենագրություններ, մեթոդական ցուցումներ, ուսումնական ձեռնարկներ, որոնք հրապարակվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

Շուրջ 7 տարի ղեկավարելով «Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի» ամբիոնը՝ Յ. Գասպարյանն իր անձնային առանձնահատկություններով և մասնագիտական բարձր հմտություններով նպաստել է ոչ միայն ամբիոնի, այլև Հայաստանի սոցիոլոգիական դաշտի զարգացմանը: Ցավոք, 2022 թվականի օգոստոսին Յ. Գասպարյանը կնքեց իր մահկանացուն՝ համալսարանին թողնելով սոցիոլոգիական ոլորտի զարգացմանը նպաստող իր մեծ ժառանգությունը:

«Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի» ֆակուլտետ Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն

Խամրած մշուշում ցամաքող ամպի
լացելն ո՞ւմ է պետք...
Հոգի է տալիս,
արցունք չի գալիս,
Մշուշում կորչում,
քամի է դառնում
Վշշում է, փչում
արցունք չի գալիս...
Մոխրագույն ամպը անձրև է ուզում,
արցունք է ուզում...
Հոգին եռում է,
սիրտը բախում է,
Մոխրագունել է. լացել է ուզում
Կապույտ երկնքին կարո՞տ է ամպը...
Կանաչ տերևն է կարոտ երկնքին,
Իսկ ամպը հոգնած, լացել է ուզում...
երկինք ու երկիր խառնել է իրար
Փչում է, սառչում...
ամպրոպ չի դառնում
Մոխրագույն ամպը արցունք է ուզում...
Խամրած մշուշում ցամաքող ամպի
լացելն ու՞մ է պետք...

Աստղիկ ԴԱՎԻԹԱՎՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 20.10.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ